



# Армянский Колледж

## Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

### +7 904 506 91 28

### Օրերի հետ

## Ծաղկազարդը Մեծ Սալայի սուրբ Աստվածածին եկեղեցում

Սուրբ Զատիկից մեկ շաբաթ առաջ, Ավագ շաբաթվա կիրակի օրը, Հայ առաքելական եկեղեցին տոնեց Ծաղկազարդը, որը խորհրդանշում է Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Մեծ Սալա գյուղի սուրբ Աստվածածին եկեղեցում տիրում էր տոնական տրամադրություն, եկեղեցու հովիվ տեր Անանիա քահանա Բաբայանը պատրաստվում էր մատուցել տոնական պատարագ: Երգչախումբը նույնպես սիրով պատրաստվում էր իր կիրակնօրյա աշխատանքին:

«Աստվածաշնչյան պատմությունը վկայում է, որ երբ Հիսուս Քրիստոսն ավանակի վրա նստած մտել է Երուսաղեմ, հրեա հավատացյալները Տիրոջ առջև փոել են իրենց հանդերձները՝ ի նշան մեղքերի թողության: Նրանք նաև ձիթենու և արմավենու ծաղկած ճյուղերով են զարդարել Տիրոջ ճանապարհը: Հիսուս Քրիստոսը հարություն է պարգևել մեռած Ղազարոսին, իսկ ծաղկած ճյուղերը մահվանը հաղթելու խորհուրդն ունեն», - պատարագից հետո ներկա հավատացյալներին պատմեց տեր Անանիան:

«Հիսուսը շատ անգամ էր մտել Երուսաղեմ, բայց այս անգամ համարվում էր հաղթական, որովհետև խորհրդանշում էր այն Ավագ շաբաթը, որը պետք է սկսվեր: Ծաղկազարդով բացվում է Ավագ շաբաթի դուռը, որը նաև խորհրդանշում է մուտքի խորհուրդը: Նույն հրեաները, որ այդ օրը նրան դիմավորեցին ցնծությամբ և «օվսաննա» բացականչելով, որը նշանակում է օրհնություն բարձրալիս, հինգ օր անց այլ բան էին աղաղակում կայսեր՝ Պիղատոսի առջև. պահանջում էին խաչել նրան: Ծաղկազարդի մեծ խորհուրդներից մեկն էլ ուսուցանում է, թե ինչպես քրիստոնյան պետք է հաստատակամորեն գնահատակի ճանապարհով: Այդ ճանապարհին և՛ ծաղիկներ կփռվեն, և՛ փշեր, և՛ գովեստներ կլինեն, և՛ անարգանք: Անհրաժեշտ է չխաբվել կեղծ գովեստից և, ինչպես Մաթևոսի Ավետարանում Տերն է զգուշացնում՝ չվախենալ նրանցից, ովքեր մարմին են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող (Մաթևոս 10:28)», - քարոզեց քահանան:

«Ծաղկազարդը խորհրդանշում է նաև այն, որ Տերը պետք է մտնի Երուսաղեմ, մանուկները պետք է օրհնեն նրան, և մարգարեությունները կատարվեն, նա պետք է չարչարվի, խաչվի և Զատիկի տոնին մենք պետք է նրա հարության արժանանանք», - նշեց տեր Հայրը:

Տեր Անանիան ասաց նաև, որ Ծաղկազարդի նախօրեին՝ շաբաթ օրը, կատարվում է Ծաղկազարդի նախատոնակը, և բացվում է խորանի վարագույրը, իսկ հաջորդ օրը՝ ժամերգությունից հետո, մատուցվում է սուրբ Պատարագ:

Քարոզից հետո քահանան օրհնեց հավատացյալների բերած ուռենու ճյուղերն, որոնք պետք է հավատացյալ ժողովուրդը տաներ տուն: Այդ օրինած պսակներն



ու ճյուղերը պահում են մինչև հաջորդ Ծաղկազարդ: Սովորություն կա դրանք մեկ տարի պահելուց հետո՝ հաջորդ գարնանը, թաղել հողի տակ՝ ի նշան առատ բերքի և բնության բարեհաճության:

Մեկ այլ հայկական սովորության համաձայն, այդ տոնի օրը, սիրահար տղաները մոմի վրա մատանի են հագցրել՝ ի նշան սիրո խոստովանության ու ամուսնության առաջարկության: Եթե աղջիկը մատանին մոմից հանել ու իր մատին է դրել, նշանակել է՝ համաձայն է: Ոչ հեռավոր անցյալում գյուղերում սովորույթ է եղել. Ծաղկազարդին երեխաները փոքրիկ պարկե-

րով շրջել են տնետուն ու հավկիթներ հավաքել, որոնք հաջորդ կիրակի ներկել են: Ժողովրդական ծեսերն ու տոնակատարությունները, սովորություններն ու խաղերը, որոնք տեղի են ունենում Ծաղկազարդին, ծագումնաբանորեն չեն անչվում քրիստոնեական տոնի և ավետարանական պատումի հետ:

Վերջում տեր Անանիան հանդես եկավ հայտարարություններով, կապված Ավագ շաբաթվա սպասվելիք տոների հետ, որը կեզրափակվի սուրբ Զատիկով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարության տոնով:

**Արմինե Հովսեփյան**

### Հետաքրքրի է իմանալ

## Հայերի համաշխարհային նշանակության գյուտերը

Շատ հաճախ ենք հայտնաբերում, որ միջազգային հռչակ ունեցող այս կամ այն հայտնի մարդն ունի հայկական ծագում: Զարմանալի ոչինչ չկա, քանզի հայ ազգն իր մտավոր ու նյութական ներուժի շնորհիվ աշխարհին է տվել բազմաթիվ տաղանդավոր ռազմական և քաղաքական գործիչներ, գիտության, մշակույթի, սպորտի, բիզնեսի և այլ բնագավառների այնպիսի մարդիկ, առանց որոնց թողած ժառանգության աշխարհը լիարժեք չէր լինի: Զեզ ենք ներկայացնում հայ գյուտարարներից մի քանիսին:

**Քրիստափոր Տեր-Սերոբյան** ամերիկյան դուլարի կանաչ և սև գույների գյուտի հեղինակն է: Իր աշխատանքի դիմաց Տեր-Սերոբյանը ստացել է 6000

դուլար, որով շարունակել է ուսումը:

**Լյուիս Զորջ Սիմիջյան** ավելի քան 200 գյուտերի հեղինակ է: Մեր ժամանակների «էդիսոնին» են պատկանում ավտոմատի, ինքնակարող լուսախցիկի, հեռուստահուշարարի, մանրադիտակային պատկերների լուսարձակի գյուտերը:

**Վարազդատ Քազանջյանը** 1914 թվականին կոսմետիկ վիրահատությունը կատարած ամերիկահայ վիրաբույժն է: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հարվարդի համալսարանում ստեղծում է համապատասխան բաժին և պատրաստում առաջին կոսմետիկ վիրաբույժներին:

**Արթուր Բուլբուլյանը** ստեղծել է A-14 թթվածնային դիմակները, որոնք ամերիկյան ռազմաօդային ուժերն օգտագործել են Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:

**Ալեք Մանուկյանը** 1954 թվականին արտոնագրեց միաբնույնակ ծորակը, որից կարող է և՛ տաք, և՛ սառը ջուր հոսել: Սա հեղափոխություն էր ջրամատակարարման համակարգում:

**Գաբրիել Քազանջյանը** մագետի չորացման սարքի՝ ֆենի գյուտի

հեղինակն է: Այն պաշտոնապես գրանցվել է 1911 թվականին:

**Ալբերտ Կապիկյանն** ամերիկահայ վարակաբան է, ով մշակել է առաջին արտոնագրված պատվաստանյութը ռոտավիրուսային վարակի դեմ:

**Միքայել Տեր-Պողոսյանը** 1977 թվականին ստեղծել է համակարգչային տոմոգրաֆիայի միջոցով մարդու մարմնի պատկերը վերարտադրող սարքը:

**Ռեյմոնդ Դամադյանը** ստեղծել է միջուկային մագնետիկ ռեզոնանսի սկզբունքով գործող սկանները, առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից բժշկությունը:

**Ասատուր Սարաֆյանը** մեքենաների ավտոմատ փոխանցման տուփի, բենզինային պոմպի և ավտոյուրի չափիչի գյուտերի հեղինակն է: Նրա հանձարեղ մտքի արգասիքն են նաև ուղղաթիռի տրանսմիսիան և բազմագույն տպիչ սարքը:

**Արտյոմ Միկոյան**՝ աշխարհահռչակ ավիակոնստրուկտոր, ինժեներատեխնիկական ծառայության գեներալ – գեղապետ, ՄԻԳ ռազմական օդանավերի ստեղծողը:

**Հովհաննես Ադամյանը** գունավոր հեռուստատեսության և լուսահեռագրության գյուտարարն է: 1925 թվականին Երևանի



համալսարանի լաբորատորիայում նա պատրաստել և գործողության մեջ է դրել «հեռատես» եռագույն պատկերման սարքը: Նրա մշակած եռագույն հեռուստատեսությունն առաջին անգամ կիրառվել է Լոնդոնում 1928 թվականին:

**Ստեփան Ստեփանյանին** է պատկանում բեռնատարի թափքի բետոնախառնիչի գաղափարը, որը մեծ նշանակություն է ունեցել շինարարության զարգացման մեջ:

**Էմիլ Ավագյանը** հաշմանդամների խնդիրները թեթևացնող մի շարք գյուտերի հեղինակ

է: 1961 թվականին ԱՄՆ նախագահ Զորջ Քենեդին նրան պարգևատրել է հաշմանդամների խնդիրների լուծման գործում մեծ ներդրումների համար: Նա է ստեղծել ձեռքով կառավարվող անվասայլակը:

**Ռոջեր Էդուարդ Քուլինգվուդ Ալթունյանը** հայտնագործել է ասթմայով հիվանդ մարդկանց համար ինհալյատորը և նատրիումի քրոմոլինը՝ նախատեսված ասթմայի, ալերգիայի բուժման համար:

**Ռուբեն Էքսերջյանը** հայտնագործել է զենիթային հրանոթը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ օգտագործվում է ԱՄՆ ռազմական ուժերի կողմից:

**Արտաշես Հայկանյանը** ստեղծել է առաջին պլաստիկ տարաները, Coca-Cola-ի պլաստիկ շշերի արտադրության մեքենան, մեքենայի դիմապակիների մաքրիչները, հյութերի ձողիկներն ու էլի մի քանի գյուտերի հեղինակ է:

**Պատրաստեց՝ Կարեն Հովսեփյանը**

